

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 2-ին, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի հաջորդ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի դահլիճում, տեղի ունեցավ Հայաստանի տարբեր թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հանդիպումը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Արդեն ավանդույթ դարձած այս հանդիպումը կազմակերպվում է դեռևս երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության շրջանից: Երանաշնորհ Հայրապետը Հայոց առաջին լուսավորիչներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների ոգեկոչման տոնը հռչակեց որպես կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների և քրիստոնեական դաստիարակության օր՝ որպես քարոզչության և առաքելության խորհրդի ոգեկոչում: Եվ ահա, արդեն մի քանի տարի, այն նշվում է մեծ հանդիսավորությամբ: Հայաստանի տարբեր մարզերից եկած հոգևոր դպրոցների ուսուցիչները, ստանալով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, վերադառնում են թեմեր՝ Միածնի Իջման Ս. Վայրից առ Աստված առաքած աղոթքներով զորացած:

Հանդիպման գեղեցիկ մասն էր կազմում Էջմիածնի կիրակնօրյա դպրոցների սաների ջանքերով կազմակերպված հանդիսությունը, որի ընթացքում մանուկների շուրթերից հնչեցին հոգևոր երգեր ու աղոթքներ: Ելույթ ունեցան նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի կամերային նվագախումբը և ջութակահարների քառյակը:

# ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաժեշտ տալու նպատակով դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց դեսպանի դերը հայ-ֆրանսիական կապերի սերտացման գործում: Անդրադառնալով երկու երկրների միջև ջերմ հարաբերություններին, Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ նշեց Ֆրանսիայի ներդրումը ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում, ինչպես նաև Ֆրանսիայի կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց առաջիկա օրերին Նորին Սրբության Ֆրանսիա կատարելիք հովվապետական այցի մասին՝ այն վստահությամբ, որ այդ այցը նույնպես իր նպաստը կբերի երկու երկրների միջև կապերի զարգացմանը:

Հրաժեշտ տալով պրն Լեգրային, Հայոց Հայրապետը հաջողություն մաղթեց նրան դիվանագիտական հետագա առաքելության մեջ: